ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ԱՆԱՁԱՏ ԵՎ ԿԻՍԱԱՁԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀՀ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳՐՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	N 111-Ն
Տիպ	Հրաման
Ակտի տիպ	Պաշտոնական Ինկորպորացիա (07.12.2023-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Միասնական կայք 2023.03.20-2023.04.02 Պաշտոնական հրապարակման օրը 31.03.2023
Ընդունող մարմին	Շրջակա միջավայրի նախարար
Ընդունման ամսաթիվ	27.03.2023
Ստորագրող մարմին	Շրջակա միջավայրի նախարար
Ստորագրման ամսաթիվ	27.03.2023
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	01.04.2023

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

27 մարտի 2023 թ. N 111-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ԱՆԱՋԱՏ ԵՎ ԿԻՍԱԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳՐՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «գ1» կետով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու թույլտվության տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում ստեղծել անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու թույլտվության համար մասնագիտական եզրակացություն տրամադրող հանձնաժողով և հաստատել նրա անհատական կազմն ու աշխատակարգը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

27 մարտի 2023 թ.
ք. Երևան **Հ. Սիմիդյան**

Հավելված
շրջակա միջավայրի նախարարի
2023 թվականի 27 մարտի N 111-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ԱՆԱՋԱՏ ԵՎ ԿԻՍԱԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳՐՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական և իրավաբանական անձանց (բացառությամբ՝ գիտահետազոտական, կենսաբանական ուսումնասիրությունների, վերարտադրության, կլիմայավարժեցման, բժշկական, անասնաբուժական, ուսումնական և ցուցադրության նպատակներով վայրի կենդանիներ օգտագործող պետական, գիտահետազոտական, ուսումնական, անասնաբուծական կազմակերպությունների) կողմից անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու թույլտվության (այսուհետ՝ Թույլտվություն) տրամադրման հետ կապված իրավահարաբերությունները:

(1-ին կետը խմբ. 28.11.23 N 438-Ն)

2. Թույլտվությունը տրամադրում է Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհի պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական մարմինը (այսուհետ՝ Լիազորված մարմին):
3. Թույլտվության տրամադրման համար հիմք է հանդիսանում մասնագիտական հանձնաժողովի կողմից տրամադրված դրական եզրակացությունը:
4. Թույլտվության տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով Լիազորված մարմնի կողմից ստեղծվում է անազատ և կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու թույլտվության համար մասնագիտական եզրակացություն տրամադրող հանձնաժողով (այսուհետ՝ Մասնագիտական հանձնաժողով):
5. Թույլտվությունը տրամադրվում է սույն կարգի Ձև N 1-ին համապատասխան:
6. Թույլտվություն ստանալու նպատակով ֆիզիկական և իրավաբանական անձինք Լիազորված մարմին են ներկայացնում՝
1) Թույլտվության տրամադրման մասին հայտ՝ համաձայն Ձև N 2-ի:
7. Հայտում նշվում է.
1) իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական անձի

պետական գրանցման վկայականի (գրանցման) համարը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում), ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում), անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականի (գրանցման) համարը,

2) պահման ենթակա վայրի կենդանու տեսակը (հայերեն և լատիներեն անվանումները),պահման նպատակը, առանձնյակների քանակը, սեռը, տարիքի վերաբերյալ տեղեկատվությունը:

8. Հայտին կից ներկայացվում է հետևյալ փաստաթղթերը.

1) իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի, կանոնադրության կամ ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթղթի, անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականի պատճենները,

2) ֆիզիկական կամ իրավաբանական անձինք՝ կենսաբանության կամ կենդանաբանության կամ տվյալ բնագավառում որակավորված մասնագետների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժական գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ կնքած պայմանագրերի պատճենները,

3) վայրի կենդանու ձեռքբերումը փաստող փաստաթղթեր, բացառությամբ՝ մինչև սույն կարգի ուժի մեջ մտնելը առանց թույլտվության գործունեություն իրականացնելու դեպքերի,

4) վայրի կենդանիների կենսաբանական, անհատական և տեսակային առանձնահատկություններից, ֆիզիոլոգիական վիճակից բխող ու գոյատևման համար անհրաժեշտ կարիքները բավարարող պայմանների համապատասխանելիության մասին փաստաթուղթ, այդ թվում՝ յուրաքանչյուր կենդանատեսակի պահման համար նախատեսված տարածքի չափի, տարածքի զոոհիգիենիկ պայմանների, կենսակերպի համար անհրաժեշտ գույքի և սարքավորումների առկայության մասին տեղեկություն՝ համաձայն Ձև 3-ի, ինչպես նաև դրանց իսկությունը փաստող լուսանկարները:

(8-րդ կետը խմբ. 28.11.23 N 438-Ն)

9. Հայտը և հայտին կից փաստաթղթերը ներկայացվում են Լիազորված մարմին առձեռն կամ փոստով կամ էլեկտրոնային փոստով:

II. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

10. Լիազորված մարմինը հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերն ստանալուց հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է Թույլտվություն կամ մերժում է հայտը:

11. Լիազորված մարմինը հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է փաստաթղթերի ամբողջականությունը և հայտում կամ հայտին կից ներկայացված փաստաթղթերում թերություններ հայտնաբերելու կամ փաստաթղթերը թերի լինելու դեպքում գրավոր տեղեկացնում է Հայտատուին՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնելու Լիազորված մարմնի կողմից նշված թերությունները:

12. Լիազորված մարմինը հայտն ստանալուց հետո 8 աշխատանքային օրվա ընթացքում Թույլտվության համար անհրաժեշտ լիակազմ և ամբողջական փաստաթղթերի պատճենները ներկայացնում է Մասնագիտական հանձնաժողովի քննարկմանը:

13. Մասնագիտական հանձնաժողովը, հայտը և կից փաստաթղթերը ստանալու օրվանից ոչ ուշ քան 20 աշխատանքային օրվա ընթացքում Լիազորված մարմնին է ներկայացնում եզրակացություն տվյալ հայտատուին թույլտվություն տալու վերաբերյալ: Մասնագիտական հանձնաժողովի անդամների առաջարկությամբ Հայտատուն հրավիրվում է Մասնագիտական հանձնաժողովի նիստին:

14. Մասնագիտական հանձնաժողովի անդամների առաջարկությամբ Լիազորված մարմինը Մասնագիտական հանձնաժողովին է տրամադրում նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնից (այսուհետ՝ տեսչական մարմին) ստացած՝ տվյալ հայտատուի իրավախախտումների վերաբերյալ տեղեկությունը:

(14-րդ կետը խմբ. 28.11.23 N 438-Ն)

15. Լիազորված մարմինը, Մասնագիտական հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո, 2 աշխատանքային օրվա ընթացքում Հայտատուին գրավոր տեղեկացնում է Մասնագիտական հանձնաժողովի կողմից տրված եզրակացության արդյունքների մասին:

16. Հայտատուն, լիազորված մարմնի կողմից Թույլտվության տրամադրելու մասին տեղեկանալուց հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով վճարում է պետական տուրք ինչից հետո Լիազորված մարմնից ստանում Թույլտվությունը:

(16-րդ կետը փոփ. 28.11.23 N 438-Ն)

17. Թույլտվությունը տրվում է 5 տարի ժամկետով:

(17-րդ կետը փոփ. 28.11.23 N 438-Ն)

17.1. Լիազորված մարմինը ոչ ուշ քան 60 աշխատանքային օր առաջ պատշաճ ձևով ծանուցում է Թույլտվություն ստացած ֆիզիկական կամ իրավաբանական անձանց՝ թույլտվության ժամկետի ավարտի վերաբերյալ:

(17.1-ին կետը լրաց. 28.11.23 N 438-Ն)

17.2. Թույլտվություն ստացող իրավաբանական կամ ֆիզիկական անձը Թույլտվությունը ստանալուց հետո եռամսյա ժամկետում պարտավոր է սահմանել և լիազորված մարմնին տրամադրել յուրաքանչյուր կենդանատեսակի համար սննդակարգ և պարտադիր անասնաբուժական զննումների գրաֆիկ՝ հաստատված կենսաբանության կամ կենդանաբանության կամ տվյալ բնագավառում որակավորված մասնագետի կողմից:

(17.2-րդ կետը լրաց. 28.11.23 N 438-Ն)

17.3. Սույն կարգի 17.2 կետով սահմանված պահանջը հանդիսանում է Թույլտվության տրամադրման համար պարտադիր կատարման պահանջ և դրա չկատարումը հիմք է հանդիսանում Թույլտվությունը լիազորված մարմնի կողմից ուժը կորցրած ճանաչելու համար:

(17.3-րդ կետը լրաց. 28.11.23 N 438-Ն)

18. Թույլտվություն ստացած ֆիզիկական կամ իրավաբանական անձինք թույլտվության ժամկետի ավարտից ոչ ուշ քան 35 աշխատանքային օր առաջ, պարտավոր են Լիազորված մարմնին գրությամբ դիմել Թույլտվությունը երկարաձգելու համար:

(18-րդ կետը փոփ. 28.11.23 N 438-Ն)

18.1. Լիազորված մարմինը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ներկայացրած գրությունը 15 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է Մասնագիտական հանձնաժողովին՝ կից տրամադրելով տեսչական մարմնից ստացած՝ տվյալ դիմումատուի վերաբերյալ տեղեկությունը:

(18.1-ին կետը լրաց. 28.11.23 N 438-Ն)

18.2. Եթե տեսչական մարմնի կողմից տրված՝ տվյալ դիմումատուի վերաբերյալ տեղեկությունում առկա են արձանագրված իրավախախտման դեպքեր, Մասնագիտական հանձնաժողովը ոչ ուշ քան 7 աշխատանքային օրվա ընթացքում տեղում իրականացնում է ուսումնասիրություններ և 3 աշխատանքային օրվա ընթացքում Լիազորված մարմնին ներկայացնում մասնագիտական եզրակացություն:

(18.2-րդ կետը լրաց. 28.11.23 N 438-Ն)

18.3. Լիազորված մարմինը Մասնագիտական հանձնաժողովի կողմից ուսումնասիրությունների արդյունքում արձանագրած թերությունների ու անհամապատասխանությունների վերաբերյալ գրավոր ծանուցում է դիմումատուին՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում թերությունները վերացնելու և պատասխան գրությամբ դրանց վերացումը փաստող լուսանկարները Լիազորված մարմնին ներկայացնելու անհրաժեշտության մասին:

(18.3-րդ կետը լրաց. 28.11.23 N 438-Ն)

18.4. Սույն կարգի 18.3-րդ կետով Սահմանված ժամկետում թերություններն ու անհամապատասխանությունները չվերացնելու և պատասխան գրությամբ Լիազորված մարմնին չներկայացնելու դեպքում, երկարաձգման դիմումը մերժվում է:

(18.4-րդ կետը լրաց. 28.11.23 N 438-Ն)

19. Լիազորված մարմինը, Մասնագիտական հանձնաժողովի կողմից ներկայացրած դրական եզրակացության հիման վրա, Թույլտվությունը երկարաձգում է ևս 5 տարի ժամկետով: Վերջինս 30 աշխատանքային օրվա ընթացքում տալիս է Թույլտվություն՝ «Երկարաձգում» նշագրմամբ:

(19-րդ կետը լրաց., փոփ. 28.11.23 N 438-Ն)

20. ***(կետն ուժը կորցրել է 28.11.23 N 438-Ն)***

21. Թույլտվությունը հավաստող փաստաթուղթը կորցնելու դեպքում Թույլտվություն ստացած անձը դրա մասին գրավոր հայտնում է Լիազորված մարմնին: Վերջինս 5 աշխատանքային օրվա ընթացքում տալիս է Թույլտվություն՝ «Կրկնօրինակ» նշագրմամբ:

22. Հայտում կամ հայտին կից փաստաթղթերում ներկայացված կենդանու պահելու պայմանների կամ գործունեության իրականացման նպատակի փոփոխություն նախատեսելու դեպքում, ֆիզիկական կամ իրավաբանական անձինք այդ մասին գրությամբ տեղեկացնում են Լիազորված մարմնին ոչ ուշ քան փոփոխությունն անելուց 20 աշխատանքային օր առաջ:

(22-րդ կետը փոփ. 28.11.23 N 438-Ն)

23. Լիազորված մարմինը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից ներկայացրած գրությունը և գրությանը կից ներկայացված փաստաթղթերը տրամադրում է Մասնագիտական հանձնաժողովին:

24. Մասնագիտական հանձնաժողովը ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է մասնագիտական կարծիք:

25. Սույն կարգի 24 կետում նշված կարծիքը Լիազորված մարմինը քննարկում և վերջնական դիրքորոշումը ոչ ուշ քան մասնագիտական կարծիքն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գրությամբ տեղեկացնում է ֆիզիկական և իրավաբանական անձին:

(25-րդ կետը փոփ. 28.11.23 N 438-Ն)

26. Թույլտվությունը չի կարող փոխանցվել այլ անձի կամ օգտագործվել այլ անձի կողմից:

III. ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

27. Թույլտվության մասին հայտը մերժվում է, եթե.

1) հայտը և ներկայացված փաստաթղթերը թերի են (չեն լրացվել սույն կարգին համապատասխան լիազորված մարմնի կողմից պատշաճ ծանուցելուց հետո) կամ բացակայում են Հավելվածի 8-րդ կետով սահմանված փաստաթղթերից որևիցե մեկը կամ դրանցում բերված տեղեկատվությունները չեն համապատասխանում իրականությանը:

2) Մասնագիտական հանձնաժողովը տվել է բացասական եզրակացություն, բացառություն են կազմում մինչև սույն կարգի ուժի մեջ մտնելն առանց թույլտվության գործունեության իրականացնելու դեպքերի, որոնց հնարավորություն կտրվեն սեղմ ժամկետներում համապատասխանեցնել կենդանու պահման պայմանները տվյալ կենդանու անհատական և տեսակային առանձնահատկություններից բխող ու գոյատևման համար անհրաժեշտ կարիքները բավարարող պայմանների հետ, որոնք որպես անհամապատասխանություն նշվել է Մասնագիտական հանձնաժողովի եզրակացության մեջ:

28. Թույլտվության տրամադրումը մերժելու մասին վարչական ակտում պետք է հստակ նշվեն մերժման պատճառները:

IV. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

29. Թույլտվության տրամադրումը մերժելու մասին վարչական ակտը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված վարչական կամ դատական կարգով:

30. Առանց համապատասխան թույլտվության ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից անազատ և կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու դեպքում կիրառվում է վարչական պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

<u>ՁԵՎ N 1</u>

	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՆԱՁԱՏ ԵՎ ԿԻՍԱԱԶԱՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱՐՄԻՐ ԳՐՔՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀՄԱՆ Թ ՈՒ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն N _____	
Տրման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը _____ _____		
o ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ		
Անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության վայրը, անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականի (գրանցման) համարը _____ _____ _____		
o ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ		
Իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը, գտնվելու վայրը _____ _____ _____		
Գործունեության իրականացման վայրը _____ _____		
Պահման ենթակա վայրի կենդանու(կենդանիների) տեսակ(ներ)ը (հայերեն և լատիներեն անվանումները) _____ _____ _____		

_____

Պահման նպատակը

_____
_____
_____

Պահման ենթակա կենդանիների առանձնյակների քանակը, սեռը, տարիքը

_____
_____
_____
_____
_____

Թույլտվության տրման հիմքը _____

_____
_____

Պարտադիր պահանջ

Թույլտվություն ստացող անձը թույլտվությունը ստանալուց հետո եռամսյա ժամկետում պարտավոր է սահմանել և լիազոր մարմնին տրամադրել յուրաքանչյուր կենդանատեսակի համար նախատեսված սննդակարգ և պարտադիր անասնաբուժական զննումների գրաֆիկ՝ հաստատված կենսաբանության կամ կենդանաբանության կամ տվյալ բնագավառում որակավորված մասնագետի կողմից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Կ.Տ.

(ձևը լրաց. 28.11.23 N 438-Ն)

<u>ՁԵ N 2</u>

ՀՀ շրջակա միջավայրի նախարար

_____
(անունը, ազգանունը)

Հ Ա Յ Տ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը

_____
_____
_____
_____

2. Իրավաբանական անձի գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի բնակության վայրը

_____
_____
_____
_____

3. Իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի (գրանցման) համարը կամ ֆիզիկական անձի անձնագրային տվյալները, անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի դեպքում՝ նաև անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականի (գրանցման) համարը

_____
_____
_____
_____

4. Գործունեության իրականացման վայրը,

_____
_____
_____
_____

5. Պահման ենթակա վայրի կենդանու(կենդանիների) տեսակ(ներ)ը (հայերեն և լատիներեն անվանումները)

_____
_____
_____
_____

6. Պահման նպատակը

_____
_____
_____
_____

7. Պահման ենթակա կենդանիների առանձնյակների քանակը, սեռը, տարիքը

_____
_____
_____
_____

8. Վայրի կենդանիներ պահող իրավաբանական անձի կամ ֆիզիկական անձի հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն(առկայության դեպքում)

_____
_____
_____
_____

ՁԵՎ N 3

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՑ ԲԽՈՂ ՈՒ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՐԻՔՆԵՐԸ ԲԱՎԱՐԱՐՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Պահման ենթակա վայրի կենդանատեսակ(ներ)ը (հայերեն և լատիներեն անվանումները)

_____
_____
_____

2. Պահման ենթակա վայրի կենդանատեսակ(ներ)ի համար նախատեսված տարածքի չափը

_____
_____
_____

3. Պահման ենթակա վայրի կենդանատեսակ(ներ)ի համար նախատեսված տարածքի զոոհիգիենիկ պայմանների բնութագիրը

_____
_____
_____

4. Պահման ենթակա վայրի կենդանատեսակ(ներ)ի համար անհրաժեշտ գույքի և սարքավորությունների առկայություն

_____
_____
_____

5. Այլ տեղեկություններ

_____
_____
_____

☐ Պարտավորվում եմ Թույլտվությունը ստանալուց հետո եռամսյա ժամկետում սահմանել և լիազորված մարմին ներկայացնել յուրաքանչյուր կենդանատեսակի համար նախատեսված սննդակարգ

☐ Պարտավորվում եմ Թույլտվությունը ստանալուց հետո եռամսյա ժամկետում սահմանել և լիազորված մարմին ներկայացնել յուրաքանչյուր կենդանատեսակի համար նախատեսված պարտադիր անասնաբուժական զննումների գրաֆիկ

_____ _____
(կենսաբանության կամ (ստորագրություն)

կենդանաբանության կամ
տվյալ բնագավառում որակավորված
մասնագետի
անունը, ազգանունը)

__ _____ 202 թ.

(ձևը լրաց. 28.11.23 N 438-Ն)

(հավելվածը խմբ., փոփ., լրաց. 28.11.23 N 438-Ն)

Պաշտոնական հրապարակման օրը՝ 31 մարտի 2023 թվական:

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան
28.11.2023, N 438-Ն	27.03.2023, N 111-Ն

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան